



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

29 հոկտեմբերի 2013 թ. № 225 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի № 146-Ա/1
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
70-րդ հոդվածի 1-ին մասի՝ *հրամայում եմ.*

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության պետական
բյուջեի միջոցների հաշվին իրականացվող երիտասարդական միջոցառումների
անցկացման համար կատարվող ծախսերի չափերը հաստատելու մասին» № 146-Ա/1
հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՅՈՒ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
 ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
 ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՉԱՓԵՐԸ

Երիտասարդական միջոցառումներ	Կատարվող ծախսերի չափերը
<p>1. Մասնակիցների, պատվիրակությունների, հյուրերի ընդունելություն՝</p> <p>1) Մենդի հետ կապված ծախս (օրական սենդի համար վճարման չափ)</p> <p>2) Հյուրանոցային ծախս ա) նվազագույնը բ) ՀՀ տարածքում և ԼՂՀ-ում գ) Երևանում</p> <p>3) Սուրճի ընդմիջման հետ կապված ծախս</p> <p>4) Ֆուրջետի կազմակերպում՝ կապված արտասահմանյան պատվիրակությունների ու հյուրերի՝ Հայաստանում ընդունելության, հորեյանների, միջազգային և հանրապետական նշանակություն ունեցող երիտասարդական միջոցառումների անցկացման հետ</p> <p>5) Արարողակարգային ճաշկերույթ (բանկետ)</p>	<p><u>Մեկ անձի համար՝</u></p> <p>մինչև 3.000 ՀՀ դրամ</p> <p>5.000 ՀՀ դրամ մինչև 15.000 ՀՀ դրամ մինչև 25.000 ՀՀ դրամ</p> <p>1.500 ՀՀ դրամ</p> <p>մինչև 2.000 ՀՀ դրամ 3.000 ՀՀ դրամ</p>
<p>2. Թարգմանչական ծառայությունների վճար՝ մեկ թարգմանչի համար</p> <p>Թարգմանչների (ուղեկցող անձանց) թիվը պետք է որոշվի պատվիրակության 5-ից ոչ ավելի անդամների համար</p> <p>Գրավոր թարգմանությունների դեպքում (հայերենից ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և հակառակը)</p>	<p><u>Մեկ ժամվա համար՝</u></p> <p>սովորական թարգմանություն մինչև 5.000 ՀՀ դրամ համաժամանակյա թարգմանություն՝ մինչև 22.000 ՀՀ դրամ</p> <p>A4 ֆորմատի մեկ էջը՝ մինչև 5.000 ՀՀ դրամ</p>
<p>3. Հուշանվեր՝ հայկական խորհրդանիշով՝</p> <p>1) Արտասահմանյան պատվիրակության ղեկավարի համար</p> <p>2) Հորեյարի, ինչպես նաև փառատոնի և մրցույթի հաղթողների համար</p>	<p>մինչև 20.000 ՀՀ դրամ</p> <p>մինչև 10.000 ՀՀ դրամ</p>

<p>4. Միջազգային և հանրապետական գիտաժողովի, ֆորումի, սեմինարի, փառատոնի, մրցույթի գովազդային նյութերի պատրաստում (համապատասխան պատկերանիշով (լոգո) դաջված վերնաշապիկ, գլխարկ, պոլիէթիլենային պարկ, կրծքանշան, բեյջ, գրենական պիտույքներ)</p>	<p><u>Մեկ անձի համար՝</u></p> <p>մինչև 15.000 ՀՀ դրամ</p>
<p>5. Երիտասարդական միջոցառումների և ծրագրերի իրականացման շրջանակներում կատարվող ծառայությունների դիմաց վճարվող հոնորարների առավելագույն չափը</p>	<p>ոչ ավել, քան ծրագրի ընդհանուր արժեքի 35 %-ը ամբողջ ծրագրի ընթացքում</p>
<p>ա) Ծրագրի ղեկավարի (խորհրդատուի) հոնորար՝ ներառյալ հարկերը</p> <p>մինչև 500.000 ՀՀ դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում</p> <p>500.000–2,000.000 ՀՀ դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում</p> <p>2,000.000 ՀՀ դրամից բարձր արժողությամբ ծրագրերի դեպքում</p>	<p>Հավասարեցվում է գործող ամսական նվազագույն աշխատավաճի չափին</p> <p>մինչև 132.000 ՀՀ դրամ</p> <p>մինչև 198.400 ՀՀ դրամ</p>
<p>բ) Ծրագրի համակարգողի հոնորար (ներառյալ հարկերը)</p> <p>- 500.000 – 2,000.000 ՀՀ դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում</p> <p>- 2,000.000 ՀՀ դրամից բարձր արժողությամբ ծրագրերի դեպքում</p>	<p>մինչև 120.000 ՀՀ դրամ</p> <p>մինչև 160.000 ՀՀ դրամ</p>
<p>գ) Ծրագրի հաշվապահի հոնորար (ներառյալ հարկերը)</p> <p>մինչև 500.000 ՀՀ դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում</p> <p>500.000 – 2,000.000 ՀՀ դրամ արժողությամբ ծրագրերի դեպքում</p> <p>2,000.000 ՀՀ դրամից բարձր արժողությամբ ծրագրերի դեպքում</p>	<p>Հավասարեցվում է գործող ամսական նվազագույն աշխատավաճի չափին</p> <p>մինչև 80.000 ՀՀ դրամ</p> <p>մինչև 120.000 ՀՀ դրամ</p>
<p>դ) Երիտասարդության ոլորտում գործող ծրագրերի շրջանակում սպասարկման ծառայություններ (ներառյալ հարկերը)</p> <ul style="list-style-type: none"> - Կայքի ադմինիստրատոր - Խմբագիր/սրբագրիչ - Ծրագրավորող - Լրագրող - Ֆոտո/վիդեոնկարահանող - այլ սպասարկող անձնակազմ 	<p>մինչև 160.000 ՀՀ դրամ</p> <p>մինչև 110.000 ՀՀ դրամ</p> <p>մինչև 150.000 ՀՀ դրամ</p> <p>մինչև 100.000 ՀՀ դրամ</p> <p>մինչև 100.000 ՀՀ դրամ</p> <p>Հավասարեցվում է գործող ամսական նվազագույն աշխատավաճի չափին</p>

ե)	Ծրագրի փորձագետի հոնորար մեկ ծրագրի փորձագիտության համար	Մեկ ծրագրի փորձագիտական գնահատման համար 15.000 ՀՀ դրամ, ոչ ավելի, քան ամսական 150.000 ՀՀ դրամ
զ)	Հոբելյանական երեկոյի, փառատոնի, մրցույթի, ստուգատեսի, միջոցառման իրականացում՝ <ul style="list-style-type: none"> - նախագիծ, սցենար - ժյուրիի անդամ - նկարիչ (դիզայներ) - լուսանկարչական ծառայություն 	մինչև 200.000 ՀՀ դրամ մինչև 5.000 ՀՀ դրամ, 1 օրը մինչև 200.000 ՀՀ դրամ մինչև 30.000 ՀՀ դրամ (1 միջոցառման սպասարկման համար)
է)	Ուսուցողական ծրագրերի և վարպետության դասերի անցկացման՝ ուսուցիչ, վարպետ, դասընթացավար, հեռաստաուսուցման դասընթացավար, մասնագետ	<u>Մեկ ժամվա համար՝</u> 2400-3500 ՀՀ դրամ
6.	Տպագրական ծախսեր՝ <ul style="list-style-type: none"> ա) ծալաթերթի (բուկլետ) ձևավորում և պատրաստում (առավելագույնը 3 թերթ) բ) գունավոր ծալաթերթի (նվազագույնը 3 գույն) ձևավորում, (առավելագույնը 12 թերթ) գ) գունավոր ծալաթերթի (նվազագույնը 3 գույն) տպագրում և պատրաստում (առավելագույնը 12 թերթ) հրավիրատոմսի պատրաստում պատվոգրեր, հավաստագրեր, վկայականներ վկայագիր (դիպլոմ)՝ շրջանակով պաստառ 	<u>Մեկ հատր՝</u> մինչև 100 ՀՀ դրամ մինչև 5.000 ՀՀ դրամ մինչև 250 ՀՀ դրամ մինչև 800 ՀՀ դրամ մինչև 500 ՀՀ դրամ մինչև 2.000 ՀՀ դրամ 1 քմ՝ մինչև 6.000 ՀՀ դրամ
7.	Տեսանկարահանման ծառայություն (տեսահոլովակներ, տեսաֆիլմեր, անիմացիա)	մինչև 30 րոպե տևողությամբ՝ մինչև 1,300.000 դրամ
8.	Ծաղիկների ձեռքբերում՝ <ul style="list-style-type: none"> - ծաղկեփունջ - ծաղկեպսակ 	մինչև 7.000 ՀՀ դրամ մինչև 25.000 ՀՀ դրամ»:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Մ. ԱՆԱՆՅԱՆ